

Newsletter

Issue 5
December 2005

Տեղեկագիր

Թիվ 5
դեկտեմբեր 2005

John Nichols Visits ATC

During the week of December 5th, John Nichols visited ICARE and ATC. Dr. Nichols is the Leader of the agribusiness program which has established and fostered the Agribusiness Teaching Center since its inception. He is a professor of food and agribusiness marketing and is currently also serving as Interim Head of the Department of Agricultural Economics at Texas A&M University. Below is an interview with Dr. Nichols.

What was the purpose of your visit?

I really enjoy seeing the progress of the students, faculty and ATC staff. With e-mail and the newsletters from the ATC and ICARE, I get regular updates on what is happening, but one has to be here to really experience the spirit of the place. My role is to help Dr. Dunn and the faculty to develop strategy and identify opportunities so that this great experience can continue to benefit students and farmers and agribusinesses of Armenia. I try to visit ATC twice each year to learn what is happening and assist in planning and decision-making. These visits are essential for me to be able to keep up with all the activities going on here.

Who did you visit with and what are the impressions?

I have met with many people including the Rector of the Armenian State Agrarian University, the Director of CARD, most of the faculty and staff, and some of the students who are considering graduate school in the United States. As always, I am impressed with the interest and enthusiasm shown by the ATC students. On this trip I spent some time discussing the research and outreach plans of ICARE and am very excited about the newly funded projects that the faculty has developed. This will provide a great opportunity for everyone associated with our programs to reach new groups and to expand our levels of expertise and contributions to Armenia and the Caucasus region.

Where is ATC now after 5 years of establishment as a US type education institution: please elaborate on a few essential achievements?

I think we have demonstrated that the agribusiness curriculum that Dr. Dunn and the faculty have developed here is an excellent program to prepare students for professional positions in Armenia and Georgia and for graduate school studies abroad. Among the achievements is the number of employed graduates, some of whom I have read about in recent issues of the newsletter. Another measure of our achievements is the emerging research and outreach programs being developed by the faculty. The ATC is becoming recognized in Armenia and the region as the place to go for agribusiness education. And, our students who are

Ջոն Նիքոլզն այցելեց ԱՌԿ

Դեկտեմբերի 5-ից 7-ը ԱՌԿ-ն և ԱՌԿ այցելեց Ջոն Նիքոլզը: Դոկտ. Նիքոլզը ագրոբիզնեսի այն ծրագրի ղեկավարն է, որի շրջանակում ստեղծվել և զարգացել է Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը: Նա սննդարդյունաբերության և ագրոբիզնեսի մարկետինգի պրոֆեսոր է, ինչպես նաև ներկայումս ժամանակավորապես զբաղեցնում է Թեխասի A&M համալսարանի գյուղատնտեսական տնտեսագիտության բաժնի ղեկավարի պաշտոնը: Ստորև ներկայացնում ենք մեր հարցազրույցը դոկտ. Նիքոլզի հետ:

Ո՞րն է Ձեր այս այցելության նպատակը:

Ես իսկապես գոհունակությամբ եմ հետևում ԱՌԿ-ի ուսանողների, դասախոսների և աշխատակազմի առաջընթացին: Էլեկտրոնային փոստի և ԱՌԿ-ի տեղեկագրի միջոցով ես թարմ տեղեկություններ եմ ստանում այստեղ կատարվածի մասին, սակայն իրադարձությունների կիզակետում լինելու համար պետք է տեղում լինել:

Իմ նպատակն է օգնել դոկտ. Դանին և պրոֆեսորդասախոսական կազմին՝ մշակելու համապատասխան ռազմավարություն և բացահայտելու հնարավորություններ ԱՌԿ-ի հիանալի փորձը հայաստանյան ուսանողներին, ֆերմերներին և ագրոբիզնեսի ոլորտին ծառայեցնելու գործը շարունակելու համար: Ես առհասարակ փորձում եմ տարեկան երկու անգամ այցելել ԱՌԿ՝ եղած իրավիճակին ծանոթանալու և հետագա պլանավորմանն ու որոշումների կայացմանն օժանդակելու նպատակով: Այս այցելությունները խիստ կարևորում են ԱՌԿ-ի գործունեությանը հասու լինելու տեսակետից:

Ու՞մ հետ հանդիպեցիք և ինչպիսի՞ն են տպավորությունները:

Ես հասցրեցի հանդիպել շատերի հետ, այդ թվում՝ Հայաստանի պետական ագրարային համալսարանի ռեկտորի, CARD-ի տնօրենի, դասախոսների և աշխատակազմի, ինչպես նաև այն ուսանողների հետ, ովքեր մտադիր են ուսումը շարունակել ԱՄՆ-ում: Ինչպես միշտ, այս անգամ էլ տպավորված եմ ԱՌԿ-ի ուսանողների ցուցաբերած հետաքրքրությամբ և խանդավառությամբ: Այս ուղևորության ընթացքում քննարկեցինք նաև ԱՌԿ-ի հետազոտական և արտաուսումնական աշխատանքների պլանները և ինձ շատ ուրախացրին դասախոսների մշակած այն նախագծերը, որոնք վերջերս են ֆինանսավորվել: Սա մեր ծրագրերի հետ կապված բոլոր դասախոսներին հնարավորություն կտա հաղորդակցվելու



Continued from page 1

enrolled in graduate programs in the United States are carrying the message throughout the world!

Was there any good news that pleased you most of all during this visit?

One really exciting development is the renovations in the fifth floor. I was pleased to see this is fast becoming a reality. With this new space, we can better accommodate the students and the growing new ICARE initiatives.

How do you feel about the collaboration with the State Agrarian University of Armenia?

As you know, this has been a long and very positive relationship. Rector Tarverdyan had a vision from the first day Dr. Dunn and I met with him in 1999. That vision has been fulfilled and the cooperation of the SAUA has been excellent. The Deans and faculty have become more involved, and we hope to continue to share ideas with them. This last semester two SAUA faculty members participated in a semester-long, USDA funded faculty exchange program in U. S. universities. They are now back in Yerevan and I hope will share what they have learned with their colleagues and with the ATC students and faculty as well.

Are there any changes/new activities of significance coming up in near future?

One of the more exciting new activities is our developing program with the agricultural universities in Georgia. As noted in a recent newsletter, we are beginning to provide assistance to faculty in Tbilisi and Batumi as they design and begin to offer "ATC-style" agribusiness curriculum. This is part of a USDA initiative in Georgia which is focused on vocational and professional education in agricultural subjects. The goal is to help the universities to prepare students who can teach agribusiness subjects and work throughout the agricultural and agribusiness sector of the Georgian economy.

I want to thank the students, faculty and staff of ATC for all they have done in recent years to develop a strong program in applied business, economics, finance, management, and marketing. What we have developed with ATC, and more recently in ICARE, will serve all the citizens of Armenia well in the future. I look forward to my next visit and wish everyone a great New Year and new semester. ○

Ջոն Նիքըլզն այցելեց ԱՌԿ հարցազրույցի շարունակությունը

լավագույն փորձառության հետ և ավելի օգտակար լինել Հայաստանին և Կովկասյան տարածաշրջանին:

Չեր կարծիքով, ինչպիսի՞ հանգրվանում է այժմ ԱՌԿ-ը որպես ամերիկյան ոճին հետևող կրթական կառույց՝ ստեղծվելուց հինգ տարի անց. խնդրում եմ նշել մի քանի կարևոր ձեռքբերումներ:

Կարծում եմ, մենք արդեն ապացուցել ենք, որ դոկտ. Դանի և մյուս դասախոսների մշակած ուսումնական պլանը Հայաստանում և Վրաստանում մասնագիտական բարձր որակավորում պահանջող պաշտոններ գրավելու համար ուսանողներին պատրաստելու, ինչպես նաև արտերկրում ուսումը շարունակելու հնարավորություն տվող գերազանց ծրագիր է: Որպես նվաճում կնշտի նախ շրջանավարտների զբաղվածության բարձր ցուցանիշը, որոնցից մի քանիսի մասին ես կարդացել եմ ԱՌԿ-ի տեղեկագրի վերջին համարներում: Կարևոր նվաճում եմ համարում նաև վերջին ամիսներին ի հայտ եկած հետազոտական և արտաուսում-նական ծրագրերը, որոնք մշակում են ԱՌԿ-ի դասախոսները: ԱՌԿ-ը գնալով ավելի մեծ ճանաչում է ձեռք բերում Հայաստանում և տարածաշրջանում որպես ագրոբիզնեսի կրթություն տվող կառույց: Ի դեպ, դրան նպաստում են ԱՄՆ համալսարաններում ուսումը շարունակող մեր շրջանավարտները:

Ո՞ր նորությունը Ձեզ հատկապես գոհացրեց այս այցելության ընթացքում:

Հինգերորդ հարկի վերակառուցումը. հաճելի էր տեսնել, թե ինչպես է այն իրականություն դառնում: Նոր հարկաբաժինն անպայման նպաստելու է ուսանողների աշխատանքային պայմանների բարելավմանն ու ԱՀԿԿ հիմնադրամի նախաձեռնությունների իրականացմանը:

Ո՞րն է Հայաստանի պետական ագրարային համալսարանի հետ գործակցության վերաբերյալ Ձեր գնահատականը:

Ինչպես գիտեք, խոսքը երկար և չափազանց դրական հարաբերությունների մասին է: ՀՊԱՀ ռեկտոր Արշալույս Թարվերդյանի հետ դոկտ. Դանի և իմ առաջին իսկ հանդիպմանը 1999-ին մենք հասկացանք, որ գործ ունենք տեսլական

ունեցող ղեկավարի հետ: Այդ տեսլականն այսօր իրականություն է դարձել շնորհիվ համալսարանի հետ գերազանց գործակցության, որի մեջ գնալով ավելի շատ են ներգրավվում ֆակուլտետների ղեկաններն ու դասախոսները: Հուսով եմ, մենք դեռ բազմաթիվ մտքեր կփոխանակենք նրանց հետ ապագա զարգացումների ծիրում: Ի դեպ, այս կիսամյակը ՀՊԱՀ երկու դասախոսներ ամբողջությամբ անցկացրին ԱՄՆ համալսարաններում՝ ԱՄՆ գյուղատնտեսության ֆինանսավորած դասախոսների փոխանակման ծրագրի շրջանակում: Այժմ նրանք վերադարձել են և հուսով եմ իրենց սովորածը կփոխանակեն գործընկերներին, այդ թվում՝ ԱՌԿ-ի ուսանողներին ու դասախոսներին:

Ի՞նչ նշանակալից փոփոխություններ կամ գործունեության նոր ոլորտներ են սպասվում մոտ ապագայում:

Ուրախալի նորություններից մեկը Վրաստանի գյուղատնտեսական համալսարանների հետ աշխատանքի նոր մշակվող ծրագիրն է: Տեղեկագրի նախորդ համարում անդրադարձել էիք Թբիլիսիում և Բաթումիում դասախոսներին օժանդակելու աշխատանքներին. նրանք մշակում և արդեն սկսում են իրականացնել «ԱՌԿ-ի ոճի» ագրոբիզնեսի ուսումնական պլան: Սա Վրաստանում ԱՄՆ գյուղատնտեսության նախա-ձեռնության մաս է կազմում, որն ուղղված է գյուղատնտեսական տեխնիկական և պրոֆեսիոնալ կրթության զարգացմանը: Նպատակն է օգնել այդ համալսարաններին պատրաստելու մասնագետներ, ովքեր կկարողանան դասավանդել ագրոբիզնեսի առարկաներ, ինչպես նաև աշխատել Վրաստանի գյուղատնտեսության և ագրոբիզնեսի ոլորտում:

Ուզում եմ շնորհակալություն հայտնել ԱՌԿ-ի ուսանողներին, դասախոսներին և աշխատակազմին՝ կիրառական բիզնեսի, տնտեսագիտության, ֆինանսների, կառավարման և շուկայագիտության գործուն ծրագիր մշակելու հարցում իրենց կատարած աշխատանքի համար: Այն ամենն, ինչ մենք մշակել ու ներդրել ենք ԱՌԿ-ում, վերջերս նաև՝ ԱՀԿԿ-ում, համոզված եմ, դեռ երկար է ծառայելու Հայաստանի քաղաքացիներին: Անհամբեր սպասելու եմ իմ հաջորդ այցելությանը: Բոլորին ցանկանում եմ ուրախ Նոր Տարի և հաջող նոր կիսամյակ: ○

Olga Kudoyan Awarded Harley Martin Scholarship

A recent year-end gathering at the Armenian State Agricultural University was dedicated to handing out Norma and Harley Martin Scholarship to seven best students of the university, one from each department. Olga Kudoyan, ATC 4, was the winner in the Economics Department.

Late Harley Martin was the Marketing Director of USDA Marketing Assistance Project in Armenia for more than 5 years. Mr. Martin's tremendous professional and personal efforts have been fundamental in the development of the Armenian agribusiness. It is the third year this scholarship is conveyed to selected Agrarian University students to encourage the best students and commemorate Harley Martin, as Rector Tarverdyan stated, one of the best friends of the Armenian Agricultural University.

Rector Tarverdyan said the award commission had a tough time selecting the best among the best students. Dr. Tarverdyan handed out the certificates of Norma and Harley Martin Scholarship upon the end of a short and nice festivity organized by members of the university's Hask Club. The club was established by the Editor of the University's *Hask* newspaper, Ani Khudaverdyan and, among other activities, pleasantly surprises fellow students and teachers with cheerful events. Hask members representing all departments of the university, presented their related department using poetry and humor. Ani Kirakosyan of the Agribusiness Teaching Center has always been in the heart of these events. She presented ATC in an exciting manner.

Olga Kudoyan will enjoy the awarded scholarship



Օլգա Կուդոյանին շնորհվեց Հարլի Մարտինի անվան կրթաթոշակ

Տարեվերջյան հանդիսավոր հերթական միջոցառումը նվիրված էր Հայաստանի պետական ագրարային համալսարանի լավագույն ուսանողներից յոթին՝ յուրաքանչյուր ֆակուլտետից մեկական ուսանողի, Նորմա և Հարլի Մարտինների անվան կրթաթոշակի վկայականներ հանձնելու արարողությանը: ԱՌԿ-ի 4-րդ կուրսի ուսանողուհի Օլգա Կուդոյանը յոթ հաղթողների շարքում է:

Կրթաթոշակի հավաստագրերը հանձնելու արարողության ժամանակ Հայաստանի պետական ագրարային համալսարանի ռեկտոր Արշալույս Թարվերդյանը նշեց, որ հանգուցյալ Հարլի Մարտինը ավելի քան հինգ տարի ղեկավարել է ԱՄՆ գյուղատնտեսության Մարկետինգի աջակցության ծրագրի մարկետինգի բաժինը: Պարոն Մարտինը հսկայական մասնագիտական և մարդկային ջանքեր է գործադրել Հայաստանում ագրոբիզնեսի ոլորտի զարգացման ուղղությամբ: Երրորդ տարին է ինչ ագրարային համալսարանի ֆակուլտետների ղեկավարության ներկայացրած թեկնածուների մեջ հանձնաժողովն ընտրում և ռեկտորատի հաստատման է ներկայացնում լավագույնների մեջ լավագույն ուսանողներին: Նորմա և Հարլի Մարտինների կրթաթոշակը, ի թիվս ագրարային համալսարանում վերջին տարիներին կիրառվող անվանական այլ կրթաթոշակների, ուսանողներին խրախուսելու նպատակ ունի: Բացի այդ, ինչպես նշեց ՀՊԱՀ ռեկտորը, կրթաթոշակը նաև նպատակ ունի հավերժացնելու մի մարդու հիշատակ, որը Հայաստանի և ագրարային համալսարանի մեծ բարեկամն է եղել:

Ռեկտորը խոստովանեց, որ հանձնաժողովի առջև բավական բարդ ընտրություն էր ծառայել՝ 25 ուժեղագույններից ընտրել լավագույն յոթին: Առավել ևս հաճելի է, որ այդ յոթի մեջ է նաև ԱՌԿ-ի ուսանողուհի Օլգա Կուդոյանը:

Պարոն Թարվերդյանը մրցույթում հաղթողներին Նորմա և Հարլի Մարտինների անվան կրթաթոշակի հավաստագրեր հանձնեց համալսարանի «Հասկ» ակումբի անդամների կազմակերպած գողտրիկ միջոցառման ավարտին: Ակումբը ստեղծել է համալսարանի «Հասկ» թերթի խմբագիր Անի Խուդավերդյանը: Ակումբի առաքելությունը գրականության ասպարեզում ստեղծագործող ուսանողներին և դասախոսներին խրախուսելն է: «Հասկը» ամեն տարի հրատարակում է «Հունձք» ժողովածուն: «Հասկի» այս տարվա «Հունձքը» ևս առատ էր, որի մասին դրվատանքով խոսեց նաև ռեկտորը:

Միջոցառման ընթացքում տարբեր ֆակուլտետներից «Հասկի» անդամ ուսանողները ներկայացրեցին իրենց ֆակուլտետները՝ պոեզիայի և հումորի ուղեկցությամբ: ԱՌԿ-ը ներկայացրեց 5-րդ կուրսի ուսանողուհի Անի Կիրակոսյանը, որը և լսարանում և թե «Հասկում» հավասարապես ակտիվ է և նրբակիրթ:

Օլգա Կուդոյանը Մարտինների անվան կրթաթոշակ կստանա մեկ տարի: ○

for one year.

Modern Courses Being Translated

Arsen Somkhishvili, Georgian State Agricultural University Tbilisi and Demna Dzirkvadze, GSAU/Batumi Agricultural Institute, were in ATC during December 3 through December 23. This visit followed the workshop organized at ATC for a group of lecturers from Tbilisi and Batumi led by Mr. Somkhishvili and Mr. Dzirkvadze. One of the matter-of-fact outcomes of the workshop was Dr. Dunn's idea to have these two young researchers back in ATC to work on translation of marketing, management and finance courses for GSAU.

According to Arsen and Demna, the mentioned course in Georgian language will partially alleviate the lack of up-to-date textbooks in the university. Demna is an ATC graduate and Arsen is a graduate of the Caucasus School of Business in Tbilisi. They are two good representatives of the new generation of Georgian agribusiness researchers armed with modern knowledge and the wish to make positive changes in Georgia's agribusiness education.



CADI Program Progressing in Georgia

By Demna Dzirkvadze
Project Coordinator



“Strengthening Higher Agribusiness Education in the Republic of Georgia” project is funded through the USDA/FAS Caucusus Agricultural Development Initiative Initiative (CADI) to Texas A&M University through the International Center for Agribusiness Research and Education (ICARE) Foundation. The project has two main parts: the English language classes for students and faculty of the Georgian State Agricultural University and Batumi Agricultural Institute; and Field Trips to successful agricultural firms and farms in Georgia. The project started in October 2005 and will end in February 2005.

In Tbilisi State Agricultural University, there are approximately 60 students and 10 faculty members taking English Language Classes. The initial number of students and faculty involved in similar courses in Batumi Agricultural University are relatively 70 and 11. Pre-Intermediate, Intermediate, and Beginners classes have been provided for



students who will be participating in a contest process in May 2006 for entering the Agribusiness Teaching Center in Yerevan.

Learning English gives the faculty members access to up-to-date professional information available on the internet. They also are starting to use contemporary textbooks for their everyday learning and teaching process. The faculty members involved in the language classes will also be able to participate in different Faculty Exchange Programs with the US and other universities.

The number of the participants in Batumi has been decreased after October 3, when the classes started. About 10 people discontinued their classes because the pre-intermediate and interme-

mediate programs turned too difficult for them. However, these people will not be overlooked: we will form a group of 12 as beginners in January 2005.

The field trips are important visual experience for agribusiness students at successful agribusinesses in Georgia. This was one of the reasons we organized field trips for our students to see how the businesses have been



founded, organized and managed. For field trips for Batumi Agricultural Institute students, we selected the neighboring Imereti region.

Overall 54 students and 3 professors participated in the field trip. We visited Mkinvari canning factory, LUKS bakery, a feed producing firm, and Megvineoba Khareba winery. We studied the marketing and finance situation in the named companies. In late November, I organized the second field trip to Batumi Wine Factory, Batumi Milk Factory, and Tirifi poultry farm.

In addition to the two main parts of CADI project, six professors from the Georgian State Agricultural University and three professors from GSAU/Batumi Agricultural Institute visited the Agribusiness Teaching Center during November 21-24 for an education workshop initiated by Daniel Dunn, within the Georgian Higher Education Program (see #4 of ATC Newsletter). Upon their return, the Georgian professors shared their experience with their colleagues in Tbilisi and Batumi.



ԿԳՆՁ ծրագրի ընթացքը Վրաստանում

Կովկասյան գյուղատնտեսական զարգացման նախաձեռնության (ԿԳՆՁ) շրջանակում, ԱՀԿՄԿ հիմնադրամի միջոցով իրականացվում է «Վրաստանի Հանրապետությունում ագրոբիզնեսի կրթության բարելավման» ծրագիրը: Այն բաղկացած է երկու հիմնական մասերից՝ անգլերենի ուսուցում Վրաստանի պետական ագրարային համալսարանում և համալսարանի Բաթումիի գյուղատնտեսական ինստիտուտում, ինչպես նաև ուսումնական գործուղումներ Վրաստանի ագրոբիզնեսի ձեռնարկություններ և գյուղացիական տնտեսություններ: Ծրագիրը մեկնարկել է 2005 թ. հոկտեմբերին և կավարտվի 2006 թ. փետրվարին:

Անգլերենի ուսուցման գործընթացին Թբիլիսիում ընդգրկվել են 60 ուսանողներ և 10 դասախոսներ, իսկ Բաթումիում, նախապես՝ համապատասխանաբար 70 և 11: Այն ուսանողների համար, ովքեր մասնակցելու են ԱՌԿ-ում սովորելու համար 2006 թ. մայիսին կայանալիք մրցույթին, անցկացվում են սկսնակների, նախամիջին և միջին բարդության դասընթացներ: Անգլերենի իմացությունը դասախոսներին թույլ կտա ինտերնետի միջոցով հասու լինել մասնագիտական ժամանակակից տեղեկատվությանը, օգտագործել արդիական դասագրքեր և մասնակցել ԱՄՆ և այլ համալսարանների հետ փոխանակման ծրագրերի:

Բաթումիում մասնակիցների նախնական թիվը կրճատվեց, քանի որ միջին դասընթացների 10 մասնակիցների համար ծրագիրը չափազանց բարդ դուրս եկավ: Սակայն, ինչպես նշեց ծրագրի համադրող Դեմնա Չիրկվաձեն, նրանք աչքաթող չեն արվում և կընդգրկվեն սկսնակների նոր խմբում:

Ինչ վերաբերում է ուսումնական գործուղումներին, ուսանողների համար կարևոր է ծանոթանալ ագրոբիզնեսի ոլորտի ձեռնարկությունների հիմնման, կազմակերպման և կառավարման մանրամասները: Բաթումիի գյուղինստիտուտի ուսանողների ուսումնական գործուղումների համար ընտրվել էին հարևան Իմերեթիի շրջանի ձեռնարկությունները: Ընդհանուր առմամբ, 54 ուսանողներ և 3 դասախոսներ մասնակցեցին գործուղումներին: Նրանք ուսումնասիրեցին այդ ձեռնարկությունների մարկետինգային և ֆինանսական իրադրությունը:

Բացի նշված երկու հիմնական մասերից, ծրագրի շրջանակում 9 դասախոսներ նույնպես ամսին փորձի փոխանակման աշխատաժողովի էին հրավիրվել ԱՌԿ (տես Տեղեկագրի թիվ 4-ը): Վերադարձին նրանք հաճույքով փոխանցեցին իրենց փորձը Թբիլիսիի և Բաթումիի իրենց գործընկերներին: ○

E-Commerce Course Proves an Effective Marketing Tool

By Iveta Simonyan
Teacher of Marketing



Many business programs have been including e-commerce courses in response to the accelerating need for online business specialists. To arm future agribusiness professionals in Armenia with the ability to use Internet as an effective marketing tool, ATC offered the first e-commerce course and included it in the program curriculum in Fall

2004. One of the assignments of the course is to develop a website and present it at the end of the course. Several students of this year's E-commerce class developed websites for local businesses, for example, Digital House, Ashtarak Kat, Kilikia, and Proshyan Brandy Factory. For other students this assignment served an idea generator for their prospective online businesses, i.e. real estate firm, infant apparel retailer, and others. Nino Olgesashvili presented a website for an NGO that she is going to establish in Georgia after graduating from ATC. Suren Hayrapetyan produced a website for his existing business. The rest used the assignment as a chance to present their hobbies, experiences abroad, and projects in other classes. Whereas the project in Entrepreneurship course inspired Sona Hayrapetyan, trip to Norway became the key topic for Ani Movsesyan's website. Ani Zakaryan devoted her website to Vermont, where she went to school last year. Finally, Hayk Ghazaryan and Narek Vardanyan impressed their classmates by the entertaining content of their websites.

Some of the websites looked quite sophisticated, even though this was students' first attempt to use HTML, Hypertext Markup Language used for creating World Wide Web pages. While there are nonprofessional user-friendly software for website development, i.e. Microsoft Front Page and Publisher, it is important to teach students HTML. Not only does this software language enable them to edit any website created by any software, but it also provides with opportunity to avoid certain pitfalls, such as extra size, display failure in case of low-speed Internet connection, etc.

Presentation of websites in the last E-commerce class spurred great interest among ATC students. I am looking forward to getting more outcomes of this course. Having developed websites for a number of existing businesses and organizations, several students presented their projects to the companies. As a result, some of these websites were published on the Web. Other students promoted the idea of online marketing during their summer internships in the agricultural sector. Finally, six students had a chance to develop a website for one of the Armenian wineries, Mets Syunik (www.metssyunik.am). The venture was sponsored by USDA MAP and proved to be a successful integration of course assignment and agricultural business support project.

I believe that our students, equipped with the knowledge regarding essentials for successful E-commerce, will greatly contribute to Armenian and Georgian businesses, trying to operate in the Internet environment. ○

Էլեկտրոնային կոմերցիան որպես մարկետինգային լծակ

Ինտերնետ ցանցի միջոցով բիզնեսի մասնագետներ պատրաստելու աճող անհրաժեշտության թելադրանքով, բազմաթիվ գործարար ծրագրեր ներառում են էլեկտրոնային կոմերցիան: Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի մասնագետներին ինտերնետ ցանցը որպես մարկետինգային արդյունավետ լծակ օգտագործելու հնարավորություն ընձեռելու համար Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը, սկսած 2004 թ., էլեկտրոնային կոմերցիա առարկան ներառել է իր ուսումնական պլանի մեջ: Ղասընթացով նախատեսված հանձնարարություններից մեկը վեր կայքի մշակումն ու դասընթացի վերջում այն ներկայացնելն է:

Այս տարվա դասընթացի մասնակից ուսանողներից մի քանիսը վեր կայքեր մշակեցին տեղական մի շարք ձեռնարկությունների, այդ թվում՝ Դիջիթալ հաուսի, Աշտարակ Կաթի, Կիլիկիայի և Պռոշյանի կոնյակի գործարանի համար: Այլ ուսանողների համար դասընթացը հիմք հանդիսացավ օնլայն բիզնես, ինչպես օրինակ՝ անշարժ գույքի ընկերություն, մանկական հագուստի մանրածախ առևտուր և այլն, վարելու գաղափարի համար:

Նինո Օլգեսաշվիլին ներկայացրեց այն ՀԿ-ի կայքը, որն ինքը մտադիր է հիմնել Վրաստանում՝ ԱՌԿ-ն ավարտելուց հետո: Սուրեն Հայրապետյանը կայք ստեղծեց իր իսկ բիզնեսի համար: Մյուսներն այս հնարավորությունն օգտագործեցին ներկայացնելու իրենց նախասիրությունները, արտերկրում կատարած ուղևորությունները, ինչպես նաև այլ դասընթացների շրջանակներում իրենց կատարած ծրագրերը:

Որոշ կայքեր միանգամայն լուրջ տեսք ունեին, թեև ուսանողներն առաջին անգամ էին օգտագործում HTML, Hypertext Markup լեզուները: Թեև այժմ գոյություն ունեն դյուրօգտագործելի ծրագրային ապահովումներ, ինչպիսիք են Microsoft Front Page-ը և Publisher-ը, կարծում եմ, մեր ուսանողներին այնուամենայնիվ անհրաժեշտ է սովորեցնել HTML: Բանն այն է, որ այս լեզուն ոչ միայն հնարավորություն է տալիս խմբագրել ցանկացած ծրագրային ապահովմամբ մշակված կայքերը, այլև թույլ է տալիս խուսափել որոշակի թերություններից:

Վեր կայքերի վերաբերյալ ներկայացումները մեծ հետաքրքրություն առաջացրին ուսանողների շրջանում: Մշակված վեր կայքերից իմ ակնկալիքները նշվածով չեն սահմանափակվում: Գործող ընկերությունների համար մշակված կայքերից մի քանիսն ուսանողները ներկայացրին հենց այդ ընկերություններին, որոնք պատրաստակամությամբ ընդունեցին և հրապարակեցին համաշխարհային ցանցում: Այսպես, վեց ուսանողներ ստեղծեցին Մեծ Սյունիք գինեգործարանի կայքը (www.metssyunik.am):

Ես հավատացած եմ, որ մեր ուսանողները, զինվելով էլեկտրոնային կոմերցիայի հիմնարար գիտելիքներով, մեծապես կնպաստեն Հայաստանի և Վրաստանի գյուղատնտեսությանը, ագրոբիզնեսի ձեռնարկություններին և կրթությանը՝ փորձելով գործունեություն ծավալել ինտերնետի միջավայրում: ○

ATC Students Helped America to Organize a Conference on Organic Farming

Suren Hayrapetyan, Anna Grigoryan, and Tatevik Gevorgyan, ATC 5, as well as Sona Babayants, ATC 4, helped America company to organize an "Organic Food and Organic Farming in Armenia" conference. It was participated by 500 people from Armenia, the US, Argentina, Italy, France, Germany, Netherlands, and other countries.

In his letter of appreciation The America CJSC Manager of Consultancy Service Gagik Sahakyan has mentioned, in particular, his company's gratefulness for the support from the ATC students who demonstrated hard work and professional skills. Suren and the girls were responsible for the on-site arrangement at the conference venue, registration of participants and overall coordination of the conference. Our

students also provided technical assistance during the Q&A sessions and general support to participants. The letter says also that ATC students were a pleasure to work with, very supportive and accurate in attending all the requests of conference participants from different countries. The conference, being the first of its kind in Armenia, was a great success. The five ATC students had their input in this success.

ATC students would not be ATC students if they did not conduct, like Suren said, "a small survey of 50 people" during the conference. The survey was related to perspectives of organic food consumption. The group later carried out another survey among 350 participants from elementary schools and supermarkets.

Guladi Tkhaishvili Is the Champion of Armenia

Guladi Tkhaishvili, ATC 3, won the championship of Armenia in Kiokushinkay karate do late November in an Armenian Open Championship, participated by also representatives of Georgia and Russia. In the final battle, Guladi, over 90 kg, came across with a challenger from Georgia.



Guladi represented Armenia. Of the two Georgians, the "Armenian" Georgian exceeded his countryman in all parameters and became the champion of Armenia in a short fight, with a nice knockdown. This victory was not a big one for Guladi, the Champion of Georgia, NIS countries, and Europe in Goju Ryu Karate do, which has just started to develop in Armenia. Still, it was pleasant for him. In may 2006 Guladi will be invited to the European Championship. And for the 2006 World Cup, Guladi is hop-

ing to find sponsors.

The Good Great ATC Giant is trying to successfully combine studying at ATC and sports harmoniously.

Գուլադի Տիսիլաիշվիլին՝ ԱՌԿ 3-ից, հաղթող ճանաչվեց նոյեմբերի վերջին Երևանում կայացած Կիոկուշինկայ կարատե դոյի Հայաստանի բաց առաջնությանը, որին մասնակցում էին, բացի հայաստանցիներից, նաև Վրաստանի և Ռուսաստանի ներկայացուցիչները: Եզրափակիչում ծանրքաշային Գուլադիի մրցակիցը Վրաստանցի էր: Գուլադին ներկայացնում էր Հայաստանը: Վրացի երկու հսկաներից «հայաստանցի» վրացին գերազանցեց մրցակցին բոլոր չափորոշիչներով և Հայաստանի չեմպիոն դարձավ կարճատև զեղեցիկ գոտեմարտում՝ իհարկե նոքրաունով:

Թեև այս հաղթանակը մեծ նշանակություն չունի Գոջու ռյու կարատե դոյի Վրաստանի, ԱՊՀ և Եվրոպայի չեմպիոն Գուլադիի համար, այնուամենայնիվ այս հաջողությունը ևս հաճելի էր:

2006 թ. մայիսին Գուլադին կիրավիրվի Իրան՝ եվրոպայի առաջնությանը: Իսկ ահա 2006 թ. աշխարհի գավաթի խաղարկությանը մասնակցելու համար հույս ունի հովանավորներ գտնել:

ԱՌԿ-ի բարի հսկան փորձում է ներդաշնակ կերպով համատեղել ուսումն ու սպորտը: Ֆիզիկապես և հոգեպես նա պատրաստ է նոր հաղթարշավների՝ երկու ասպարեզում էլ:

ԱՌԿ-ի ուսանողներն օգնեցին կազմակերպել օրգանական գյուղատնտեսությանը նվիրված խորհրդաժողով

ԱՌԿ-ի 5-րդ կուրսի ուսանողներ Սուրեն Հայրապետյանը, Աննա Գրիգորյանը, Տաթևիկ Գևորգյանը, Նաիրա Զաքարյանը և 4-րդ կուրսի ուսանող Սոնա Բաբայանցը Ամերիա ընկերությանն օգնեցին կազմակերպելու «Օրգանական սննդամթերքը և օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» թեմայով խորհրդաժողով, որին մասնակցեց 500 մարդ Հայաստանից, ԱՄՆ-ից, Արգենտինայից, Իտալիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Հոլանդիայից և այլ երկրներից:

Ամերիա ՓԲԸ կառավարման գծով խորհրդատվական ծառայության ղեկավար Գագիկ Սահակյանն իր շնորհակալական նամակում մասնավորապես նշել է իր ընկերության գոհունակությունը ԱՌԿ-ի ուսանողների խմբի աջակցության համար, ովքեր ցուցաբերեցին աշխատասիրություն և պրոֆեսիոնալ հմտություններ: Սուրենը և աղջիկները պատասխանատու էին դահլիճի դասավորվածության, մասնակիցների գրանցման և խորհրդաժողովի ընդհանուր համակարգման համար: Մեր ուսանողները նաև հարցուպատասխանի նիստերի ժամանակ տեխնիկական աջակցություն և առհասարակ ընդհանուր բնույթի օգնություն ցուցաբերեցին խորհրդաժողովի՝ տարբեր երկրներից եկած մասնակիցներին:

Նամակում ասվում է, որ ԱՌԿ-ի ուսանողների հետ աշխատելը հաճելի էր, նրանք շատ կարեկից և պատասխանատու վերաբերմունք ունեին իրենց վաստակաված աշխատանքի նկատմամբ:

Առհասարակ խորհրդաժողովը, լինելով իր բնույթով առաջինը Հայաստանում, մեծ հաջողություն ունեցավ: Մեր հինգ ուսանողները իրենց կարևոր ներդրումն ունեցան այդ հաջողության մեջ:

ԱՌԿ-ի ուսանողները ԱՌԿ-ի ուսանողներ չէին լինի, եթե խորհրդաժողովի ժամանակ «ձեռքի հետ» չանցկացնեին, ինչպես Սուրենը նշեց, «50 հոգու մի փոքրիկ սոցիալացում», որը վերաբերում էր օրգանական սննդամթերքի սպառման հեռանկարներին: Ուսանողների այս խումբը՝ հետագայում համանման սոցիալացում անցկացրեց ևս 350 մասնակիցների շրջանում՝ մանկապարտեզներում, սուպերմարկետներում և այլուր: ○

Save Our Shikahogh

One of the recent Environmental Protection classes conducted by representatives of Armenian Forests NGO and VEM Studio motivated the ATC fourth year students to share their ideas on the situation with Shikahogh Reserve.

By Sona Babayants and Olga Kudoyan, ATC 4

Each country has treasures, not expressed by precious metals, but by its nature. Nature means much more than gold and silver, and it must be protected by each individual for future generations.

In Syunik Marz, north of Meghri, south of Kapan, one of the most beautiful places of the Republic of Armenia is located. This place is a small piece of Paradise, known as Shikahogh Reserve. The area of 10,000 hectares was declared a state reserve in 1958. The reserve has rich biodiversity, which includes rare plants, 800 year-old trees, and animals such as Persian leopard, Gray bear, Bezoar goat, Armenian mouflon, and many others, registered in the Republic of Armenia and International Red Books. Can you imagine that one day all these may be lost forever?

On October 25, 2004 the RA Government made a decision on the construction of the Shvanidzor-Verishen-Tsav 102 km route. Roads play a huge role in the economic development of each country. But this development should not be implemented in the expense of nature. The route was planned to go through Mtnadzor forest in the Shikahogh Reserve, occupying 17km area of the reserve. Moreover, for construction of 10m wide road 26,000 mature and 117,000 small trees will be destroyed, which will cost 6 billion AMD (approximately 13.5 million USD). Safety of traffic was the explanation to the crucial action.

As soon as the habitats of Syunik marz found out that the new road will destroy the ecosystem of Shikahogh, they started open actions against the project, attracting attention of local and international organizations. Soon about 40 NGOs including WWF Caucasus Program Office, Armenia, Association on Sustainable Human Development, Transparency International, Armenian Botanical Society, Ecolur, Armenian Ecotourism Association, American University of Armenia and others formed "Save Our Shikahogh (S.O.S.)" Task Force. In May 2005, Karen Manvelyan, WWF Caucasus Program Office, Armenia, organized the first tour to Syunik Marz, thanks to which the problem of Shikahogh State Reserve became widely known. Hrair Hovnanian (Armenia Assembly) and Carolyn Mugar (Founder, Armenia Tree Project) sent a letter to the RA President and issued 5,000 e-mails and multiple media alerts. Even after receiving about 100 letters on this issue, the Government was insisting that the road would pass through the reserve.

"This will mean the end of the Mtnadzor region, first 10 m, then 30 m, then slowly poaching will expand driving animals from their habitat", says Ruben Mkrtchyan, Director of Shikahogh National Reserve. Relevant state bodies point out that the construction of a new road is desirable because the existing Meghri-Kapan route (length 71 km) is dangerous in winter. However, the suggested road is not less dangerous and will damage the nature. Moreover, the construction of the road would violate the related article of the RA Constitution on protection and reproduction of natural resources.

On June 17, 2005 the SOS Shikahogh working group organized a public forum devoted to the problem of Shikahogh Reserve and possibilities of constructing an alternative road, proving the statements of environmentalists. Shortly after, on June 26, 2005 the government publicized in a news conference about its decision on constructing an alternative road which bypasses the Shikahogh Reserve. The outcome environmental groups have established a monitoring group for the Meghri-Kapan highway project.

Փրկեցեք մեր Շիկահողը

Բնապահպանության վերջին դասերից մեկն անցկացնելու համար դասախոս Աստղիկին Պատյանը հրավիրել էր Հայկական անտառներ ՀԿ-ի և ՎԵՄ ստուդիայի ներկայացուցիչներին: Դասախոսությունն ու ցուցադրված տեսաֆիլմը ԱՌՈՒԿ-ի չորրորդ կուրսի ուսանողուհիներ Սոնա Բաբայանցի և Օլգա Կուդոյանի համար շարժառիթ ծառայեցին իրենց մտքերը շարադրելու Շիկահողի արգելոցի շուրջ ստեղծված իրադրության մասին:

Բնությունը որևէ երկրի հավերժական հարստությունն է և ամեն ոք պետք է պահպանի այն հաջորդ սերունդների համար:

Սյունիքի մարզում, Մեղրիի և Կապանի միջակայքում է գտնվում Հայաստանի ամենազեղատեսիլ, դրախտային վայրերից մեկը՝ Շիկահողի արգելոցը: Տասը հազար հեկտար զբաղեցնող այդ տարածքը պետական արգելոց է հայտարարվել 1958 թ.: Այն հարուստ կենսաբազմազանություն ունի՝ հազվագյուտ բույսերով, 800 տարեկան ծառերով և կենդանական աշխարհի այնպիսի ներկայացուցիչներով, ինչպիսիք են պարսկական հովազը, գորշ արջը, բեզուարյան այծը, հայկական մուֆլոնը և այլ տեսակներ, որոնք գրանցված են ՀՀ և միջազգային Կարմիր գրքերում:



2004 թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ կառավարությունը որոշում կայացրեց կառուցել Շվանիձոր-Վերիշեն-Շավ 102 կմ-անոց խճուղին: Անշուշտ, ճանապարհները մեծ դեր են խաղում որևէ երկրի տնտեսական զարգացման գործում: Սակայն այդ զարգացումը չպետք է տեղի ունենա բնության հաշվին: Նախատեսվում էր ճանապարհի 17 կմ-ն անցկացնել Շիկահողի արգելոցի տարածքով՝ Մթնածորի անտառի միջով: Ընդամենը, 10 մ լայնություն ունեցող ավտոճանապարհի շինարարությունը հանգեցնելու էր 26 հազ. հասուն և 117 հազ. մատղաշ ծառերի հատման, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 6 մլրդ դրամ (մոտավորապես 13,5 մլն ԱՄՆ դոլար): Պատճառաբանությունը անվտանգ ճանապարհ ունենալն էր:

Բակունցյան նվիրական Մթնածորի ոչնչացման հեռանկարը Սյունիքի բնակիչներին ստիպեց դիմել ծրագիրը խափանելու միջոցների՝ գրավելով տեղական և միջազգային շատ կազմակերպությունների ուշադրությունը: Շուտով մոտ 40 հասարակական կազմակերպություններ, այդ թվում WWF կովկասյան ծրագրերի գրասենյակը, Կայուն մարդկային զարգացման ընկերակցությունը, Թրանսփերենսի Ինթերնեշնլը, Հայկական բուսաբանական ընկերությունը, Էկոլուրը և այլն, ստեղծեցին «Փրկեցեք մեր Շիկահողը Save Our Shikahogh (S.O.S.)» աշխատանքային հանձնախումբը: SOS Շիկահող Հանձնախումբը կազմակերպեց հարյուրավոր նամակների հոսք դեպի կառավարություն, որը շարունակում էր պնդել ավտոմայրուղու անհրաժեշտությունը:

Ըստ արգելոցի տնօրեն Ռուբեն Մկրտչյանի, այդ ճանապարհի կառուցումը կհանգեցնի Մթնածորի կործանմանը: Առաջարկվող նոր ճանապարհը ամենևին էլ ավելի պակաս վտանգավոր չի լինելու ծնանը, քան Մեղրի-Կապան գոյություն

Continued from page 7

ունեցող ճանապարհը, էլ չենք խոսում բնությանը հասցվող անդառնալի կորստի մասին: Ավելին, այդ շինարարությունը հակասում է բնական պաշարների պահպանության և վերարտադրության վերաբերյալ ՀՀ սահմանադրության համապատասխան հոդվածներին:

2005 թ. հունիսի 17-ին SOS Շիկահող հանձնախումբը կազմակերպեց Շիկահողի արգելոցի հիմնախնդրին և այլընտրանքային ճանապարհի շինարարության հնարավորություններին նվիրված հանրային քննարկում, որը ևս մեկ անգամ հաստատեց բնապահպանների տեսակետները: Կարճ ժամանակ անց՝ հունիսի 26-ին, կառավարությունը հայտարարեց այլընտրանքային ճանապարհի կառուցման վերաբերյալ իր որոշման մասին, ճանապարհ, որը կշրջանցի Շիկահողի արգելոցը: Մեղրի-Կապան մայրուղու ծրագիրը մոնիտորինգի կենթարկեն բնապահպաններից կազմված խմբերը:

Սա բանականության հաղթանակն է անհեռատեսության

նկատմամբ, հաղթանակ, որի համար մենք՝ բնապահպանություն ուսումնասիրող ԱՌԿ-ի ուսանողներս, ավելի քան ուրախ ենք:



Ժամանակակից դասընթացները թարգմանվում են վրացերեն

Արսեն Սոմխիշվիլին՝ Վրաստանի պետական գյուղատնտեսական համալսարանից և Դեմնա Ձիրկվածեն՝ ՎՊԳՀ Բաթումի գյուղատնտեսական ինստիտուտից, գտնվում էին ԱՌԿ-ում դեկտեմբերի 3-ից 23-ը: Այս այցելությունը հետևեց պրն Սոմխիշվիլիի և պրն Ձիրկվածեի ղեկավարած վրացի դասախոսների խմբի այցելությանը, որոնք մասնակցեցին ԱՌԿ-ում կազմակերպված եռօրյա աշխատաժողովին: Աշխատաժողովի գործնական արդյունքներից մեկն էլ ICARE հիմնադրամի տնօրեն Դենիել Դանի գաղափարն էր՝ երկու երիտասարդ հետազոտողներին նորից հրավիրել ԱՌԿ՝ ՎՊԳՀ-ի համար մարկետինգի, կառավարման և ֆինանսների դասընթացների թարգմանության նպատակով:

Ըստ Արսենի և Դեմնայի, վրացերենով նշված դասընթացների առկայությունը մասամբ կմեղմի համալսարանում ժամանակակից դասագրքերի խիստ պակասը: Դեմնան ԱՌԿ-ի շրջանավարտ է, իսկ Արսենը՝ Թբիլիսիի Բիզնեսի կովկասյան դպրոցի շրջանավարտ: Նրանք վրացական ագրոբիզնեսի բնագավառի երիտասարդ ներկայացուցիչներ են, որոնք զինված են ժամանակակից գիտելիքներով և Վրաստանի ագրոբիզնեսի կրթության բնագավառում դրական փոփոխություններ իրականացնելու ցանկությամբ:



Agribusiness Teaching Center, International Center for Agribusiness Research and Education Foundation . 74 Teryan St., Yerevan, Armenia
In corporation with USDA FAS, Texas A&M University, and the State Agrarian University of Armenia
Tel: (37410) 52-28-39, 56-95-70; Fax: (37410) 56-62-21
E-mail: sos_avetisyan@yahoo.com
Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն . Երևան, Տերյան 74